**ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ**

**(1919–2006)**

Հայ բանաստեղծուհի, արձակագիր և հրապարակախոս: Ծնվել է Երևանում՝ Վանից գաղթած ընտանիքում: Սովորել է Երևանի Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցում: Տասներեք տարեկանում գրել է իր առաջին բանաստեղծությունը: Բազմաթիվ գրքերի հեղինակ է, որոնք թարգմանվել են աշխարհի տարբեր լեզուներով: Գրել է նաև մանուկների և պատանիների համար:

Եղել է Սփյուռքի գաղթօջախներում և իր հիշողություններն ամփոփել ուղեգրություններում:

Կյանքի վերջին տարիներին մեծ աշխատանք է կատարել հրապարակագրության ոլորտում:

2009 թ. նրա ապրած տանը բացվել է բանաստեղծուհու տուն-թանգարանը:

Ս. Կապուտիկյանին կոչում են ամենայն հայոց բանաստեղծուհի: